ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

3 (92)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 3 (92), 2018

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ առաջին փոխվարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ագլյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 3 (92), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վահրամ Հովյան
Հայաստան-Սփյուռք համաժողովները՝
միասնական օրակարգի ձևավորման հարթակ 4

Արեստակես Միմավորյան
Թուրքիան և թյուրքալեզու երկրների սփյուռքերի համագործակցությունը 10

Սամվել Մանուկյան, Դիանա Գալստյան
Մշակութային-լուսավորչական-դաստիարակչական հաղորդումները
Հայաստանի և Ադրբեջանի հիմնական հեռուստաալիքներում 18

Արմեն Մանվելյան
ԱԷՄԳ-ն և նրա դերը միջազգային հարաբերությունների համակարգում 26

Կարեն Վերանյան
Ռազմաքաղաքական զարգացումները Նախիջևանի շուրջ 30

Արա Մարջանյան
Ինտերնետ օգտատերերի թիվը
Հայաստանում և տարածաշրջանում 38

Հուշագիր հեղինակին 43

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐԹԱԿ

Վահրամ Հովյան*

Հայրենիք-Սփյուռք համագործակցության մոդելները կարելի է բաժանել երկու տեսակի, որոնք պայմանականորեն անվանում ենք «Միասնական ջանք» և «Միասնական օրակարգ»։

1. *«Միասնական ջանք»* մոդելը կարելի է բնութագրել որպես կենտրոնացված համագործակցություն։ Այս դեպքում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները համակարգող կենտրոնից, որը, ենթադրվում է, պետք է լինի պետությունը, սփյուռքյան կառույցները բերվում են մի հարկի տակ, առաջ է քաշվում գործողությունների նպատակը, այդ նպատակներին հասնելու միջոցները, հաշվառվում են առկա և անհրաժեշտ ռեսուրսները, տեղի է ունենում գործառույթների և դերերի բաշխում՝ այդ նպատակին հասնելու համար։ Ընդհանուր նպատակը և դրան հասնելու միջոցներն ունենում են հստակ ծրագրային ձևակերպում։ Կարճ ասած՝ «Միասնական ջանք» մոդելը ենթադրում է պետության ղեկավարությամբ սփյուռքյան կառույցների սերտ համագործակցություն որևէ կոնկրետ ծրագրի (նպատակի) իրականացման ուղղությամբ։
2. *«Միասնական օրակարգ»* մոդելը կրկին ենթադրում է պետության կողմից ընդհանուր նպատակների սահմանում, սակայն չի ենթադրում սփյուռքյան կառույցների միջև սերտ համագործակցություն դրանց իրականացման համար։ Դրա փոխարեն ենթադրվում է, որ վերջիններից յուրաքանչյուրն առանձին պետք է հասնի սահմանված նպատակին։ Այս համատեքստում սփյուռքյան կառույցներից յուրա-

---

* «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ։

քանչյուրը պետք է ունենա դրված նպատակին հասնելու սեփական ծրագիր: Այլ կերպ ասած՝ սույն մոդելի դեպքում պետությունը հանդես է գալիս միայն օրակարգ առաջադրողի դերում՝ վերջինից բխող կոնկրետ գործողությունների և ծրագրերի իրականացումը թողնելով սփյուռքյան առանձին կառույցներին:

«Միասնական ջանք» մոդելը կիրառելի է խոշոր (մեգա) նախագծերի իրականացման դեպքում, երբ դրված խնդրի լուծման համար անհրաժեշտ են մեծ միջոցներ: Նման նախագծերի իրականացումը սովորաբար վեր է լինում որևէ առանձին կազմակերպության հնարավորություններից և, հետևաբար, ենթադրում է ջանքերի և միջոցների մեկտեղման հրամայական:

Հայ իրականության մեջ Հայրենիք-Սփյուռք համագործակցության «Միասնական ջանք» մոդելն ունեցել է դրսևորումներ ինչպես անցյալում (պատմության մեջ), այնպես էլ ներկայում: Անցյալում սույն մոդելի դրսևորման լավագույն օրինակ կարելի է համարել 1946-48թթ. Մեծ հայրենադարձության՝ որպես խոշոր (մեգա) նախագծի իրականացման համատեքստում Խորհրդային Հայաստանի համագործակցությունը Սփյուռքի համազգային կառույցների հետ, որի շնորհիվ վերջիններս իրենց միջոցներով մեծապես նպաստեցին այդ գործընթացի իրականացմանը:

Նորագույն շրջանում «Միասնական ջանք» մոդելով Հայրենիք-Սփյուռք համագործակցության դրսևորումներ են «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա մարաթոնները, որոնք սովորաբար նվիրված են լինում որևէ կոնկրետ խնդրի լուծմանը: Առայսօր կարելի է առանձնացնել երեք հիմնական խոշոր (մեգա) նախագիծ, որոնք իրականացվել են հիմնադրամի ամենամյա դրամահավաք-մարաթոններով: Դրանք ՀՀ-ն Արցախի Հանրապետության հետ կապող, ինչպես նաև Արցախի ներքին հաղորդակցային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հետևյալ նախագծերն են.

ա) Գորիս-Բերձոր-Շուշի-Ստեփանակերտ ավտոմայրուղին, որը ՀՀ-ն Արցախի հետ կապող առաջին ցամաքային ուղին է և կենսական նշանակություն ունի Արցախի համար,

բ) Արցախի ողնաշարը համարվող Հյուսիս-Հարավ ավտոմայրուղին, որը վճռական նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության տնտեսության, ինչպես նաև անվտանգության համար,

գ) Վարդենիս-Մարտակերտ ավտոմայրուղին, որը ՀՀ-ն ԱՀ-ի հետ կապող երկրորդ կենսական հաղորդակցային ուղին է, անմիջական կապ է հաստատում ՀՀ-ի և ԱՀ-ի հյուսիս-արևելյան շրջանի հետ և նույնպես կարևոր նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության տնտեսության զարգացման և անվտանգության ապահովման տեսակետից:

2017թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնի ընթացքում հանգանակված գումարն ուղղվել է Արցախի ոռոգման ցանցի զարգացմանը, ինչը վճռական նշանակություն ունի հայկական երկրորդ հանրապետության գյուղատնտեսության և, ընդհանրապես, տնտեսության զարգացման համար:

Այսպիսով, քանի որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի մարաթոններին մասնակցում են կառույցներ և անհատներ ինչպես Սփյուռքից, այնպես էլ ՀՀ-ից և ԱՀ-ից, այդ մարաթոնների հանգանակություններով իրականացված վերոհիշյալ խոշոր (մեգա) նախագծերը, հիրավի, կարելի է համարել Երրորդ հանրապետության պատմության ընթացքում «Միասնական ջանք» մոդելով Հայաստան-Սփյուռք համագործակցության ամենանշանակալի դրսևորումները:

«Միասնական օրակարգ» մոդելն ավելի կիրառելի է փոքր կամ միջին նախագծերի իրականացման դեպքում, որոնք չեն պահանջում հսկայական միջոցներ և կարող են իրականացվել առանձին կազմակերպությունների կողմից: Ավելին, այս դեպքում «Միասնական օրակարգ» մոդելը ոչ միայն կիրառական է, այլև ավելի նպատակահարմար: Եթե առաջ է քաշվում համեմատաբար փոքր որևէ խնդիր (օրինակ՝ դպրոցի հիմնում), ապա դրա իրականացումը միասնաբար կարող է ոչ միայն արդյունավետ չլինել, այլև ընդհանրապես տապալվել՝ սփյուռքյան կազմակերպությունների մրցակցության, հավակնությունների և այլ պատճառներով: Մինչդեռ «Միասնական օրակարգ» մոդելի կիրառման դեպքում սփյուռքյան կազմակերպություններից յուրաքանչյուրը (դիցուք՝ երեք կուսակցու-

թյունները) առանձին-առանձին հիմնում են սեփական դպրոցներ։ Այսինքն՝ խնդրի իրականացումը ոչ միայն չի տապալվում, այլև հաջողվում է բազմապատիկ արդյունավետությամբ։

Այսպիսով, «Միասնական օրակարգ» մոդելի պարագայում ընդհանուր նպատակի դերում հանդես է գալիս ընդհանուր գաղափարը կամ տեսլականը, մինչդեռ դրա իրականացման ծրագրերը լինում են առանձին և փոքր-ինչ յուրահատուկ յուրաքանչյուր կազմակերպության համար։

Հայ իրականության մեջ Հայրենիք-Սփյուռք համագործակցության «Միասնական օրակարգ» մոդելի ամենաթարմ դրսևորումներից է ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից 2016թ. հոկտեմբերի 20-24-ը Լրագրողների համահայկական 8-րդ համաժողովում նախաձեռնված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժումը։ Միասնական օրակարգի առաջադրմամբ և Սփյուռքի յուրաքանչյուր կազմակերպությանն ու անհատին այդ միասնական օրակարգի շրջանակներում անհատապես գործելու հնարավորություն տալով հնարավոր եղավ հասնել որոշակի արդյունքի։ Շարժման շրջանակներում Սփյուռքում ոմանք փորձեցին դեղորայքով օգնել Արցախի հիվանդանոցներին, ոմանք՝ բժշկական սարքավորումներ և գույք գնելով և առաքելով, ոմանք՝ շտապ օգնության մեքենաներ ձեռք բերելով և ուղարկելով, ոմանք՝ մեքենաներ նվիրաբերելով Պաշտպանության բանակին, ոմանք՝ երաժշտական գործիքներ նվիրելով Արցախի երաժշտական կրթական հաստատություններին, ոմանք՝ պարզապես գումարով և այլն։ Այս բոլորը առանձին-առանձին վերցրած փոքր նշանակություն ունեցող աջակցություն են։ Սակայն դրանց հանրագումարը զգալի նպաստ է Արցախի երիտասարդ պետականության կայացման համար։

Հայրենիք-Սփյուռք գործակցության միասնական օրակարգի ձևավորման լավագույն հարթակ կարող են լինել Հայաստան-Սփյուռք համաժողովները։ Այդպիսի փորձ արդեն իսկ գոյություն ունի։ Խոսքը 2006թ. տեղի ունեցած Հայաստան-Սփյուռք երրորդ համաժողովի մասին է, որի ընթացքում որպես հիմնական խնդիր ՀՀ իշխանությունների կողմից դրվեց Հայաստանի գյուղական, հատկապես սահմանամերձ համայնքների

զարգացումը[1]։ 2017թ. Հայրենիք-Սփյուռք վեցերորդ համաժողովին նախագահ Ս.Սարգսյանի ելույթում հնչած նպատակային դրույթը 2040թ. Հայաստանի բնակչությունը չորս միլիոնի հասցնելու մասին նույնպես կարելի է դիտել որպես Հայրենիք-Սփյուռք գործակցության միասնական օրակարգի ձևավորման փորձ։

Հայաստան-Սփյուռք համաժողովներում միասնական օրակարգի ձևավորումը, այնուամենայնիվ, ենթադրում է, որ այն պետք է վերածվի՝ ա) լուրջ խոսույթի (դիսկուրս) ինչպես համաժողովի ընթացքում, այնպես էլ դրանից հետո (տեսական հարթություն) և բ) լուրջ շարժման (գործնական հարթություն)։ Այս խնդրի լուծման համար նպատակահարմար կլինի այսուհետ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա մարաթոնների օրինակով Հայաստան-Սփյուռք համաժողովները կազմակերպել կոնկրետ խնդիրների շուրջ, որոնք էլ կլինեն այդ համաժողովների օրակարգը։ Դրա համար անհրաժեշտ է.

1. նախօրոք սահմանել այն գաղափար-նպատակը, որը պետք է դրվի տվյալ համաժողովի օրակարգում, և այդ մասին իրազեկել համաժողովի մասնակիցներին համաժողովից նվազագույնը երեք ամիս առաջ,
2. համաժողովների խոսույթը (ելույթներ, քննարկումներ և այլն) կառուցել երկու հիմնական բաղադրիչի վրա.

- հաշվետվություն նախորդ համաժողովում առաջադրված օրակարգային գաղափար-նպատակի իրականացման վերաբերյալ (թե կոնկրետ որ կառույցի կողմից ինչ քայլեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ),
- նոր համաժողովում առաջ քաշված օրակարգի իրականացման վերաբերյալ նախատեսվող քայլեր[2]։

[1] Ենթադրվում է, որ համաժողովից հետո Սփյուռքի կառույցները և անհատ սփյուռքահայերը պետք է յուրաքանչյուրն իր կարողության չափով նպաստ բերեր այդ խնդրի իրականացմանը։ Թե ինչ քայլեր են իրականացվել այդ համաժողովից հետո Հայաստանի գյուղական համայնքների զարգացման նպատակով Հայաստանի և Սփյուռքի կողմից՝ այլ ուսումնասիրության նյութ է։

[2] Այս դրույթը չի նշանակում, որ նախատեսվող քայլերի վերաբերյալ հայտարարություններն ունեն հրամայական խոստման ուժ և պետք է անշեղորեն կատարվեն։ Գործնականում նախատեսվող քայլերի իրականացման ժամանակ թույլատրելի են նաև որոշակի շեղումներ հնչած հայտարարություններից։

Այս կերպ Հայաստան-Սփյուռք համաժողովները, ինչպես նաև հայկական հանրությունը (Հայաստան, Սփյուռք) կշահեն հետևյալ առումներով.

- Համաժողովների խոսույթը վերացականությունից անցում կկատարի կոնկրետ գործնական հարթություն, ինչի արդյունքում զգացմունքային հայրենասիրությունը, որը նույնպես կարևոր է և անհրաժեշտ, կզուգակցվի նպատակային-ծրագրային քայլերի վերաբերյալ դատողություններով։
- Համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանը կդառնա կարճաժամկետ կամ միջնաժամկետ խնդիրների լուծման շրջան։ Միջնաժամկետ կամ կարճաժամկետ՝ այն պատճառով, որ այդ ժամանակահատվածում (2-4 տարի) հնարավոր է իրականացնել միայն այդպիսի ծրագրեր։ Կամ էլ՝ Հայաստան-Սփյուռք համաժողովների միջև ընկած ժամանակահատվածները կարող են լինել որևէ երկարաժամկետ ռազմավարական խնդրի առանձին փուլերի՝ մարտավարական խնդիրների իրականացման շրջաններ։

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՍՓՅՈՒՌՔԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Արեստակես Միմավորյան[*]

Միջազգային հարաբերությունների ոլորտում սփյուռքը որպես ժողովրդական դիվանագիտության մասնիկ ձեռք է բերել կարևոր նշանակություն՝ վերածվելով յուրօրինակ սուբյեկտի: Աշխարհաքաղաքական, տնտեսական ներկա բարդ իրադրությունը տարբեր պետությունների հարկադրում է սփյուռքի հետ հարաբերություններում վարել առավել ակտիվ քաղաքականություն: Թուրքիան ևս անմասն չի մնացել այս քաղաքականությունից: «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո երկրում տեղի ունեցած տնտեսական, քաղաքական և գաղափարական փոփոխությունների հետևանքներում կարևորվեց նաև թուրքական սփյուռքի դերը՝ որպես հանրային դիվանագիտությանն աջակցող «փափուկ ուժ»: Մի կողմից՝ իրագործվեց սփյուռքի հետ կայուն հարաբերություններ հաստատելու և այն զարգացնելու քաղաքականություն, մյուս կողմից՝ այդ կապերի ուժեղացմամբ դրվեցին այնտեղ առկա քաղաքական, տնտեսական, գիտական ներուժը կապիտալիզացիայի ենթարկելու գործընթացի հիմքերը:

Պետություն-սփյուռք գործակցային ձևաչափում որպես առանձին ուղղություն արտաքին քաղաքականության օրակարգ ներառվեց նաև այլ երկրների սփյուռքերի հետ համագործակցության հարցը: Այն առաջին հերթին պետք է իրականացվեր թյուրքախոս ժողովուրդների սփյուռքերի և հետո՝ այնպիսի սփյուռքերի հետ, որոնք ռազմավարական հետաքրքրություն էին ներկայացնում Թուրքիայի համար: Սկզբում համագործակցությունը սահմանափակվում էր թուրք-ադրբեջանական տանդեմով, ընդ որում՝ նախնական փուլում շեշտն առավելապես դրված էր սփյուռքի կազմակերպչական (կառուցվածքային) աշխատանքների վրա, քանի որ երկու

[*] «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար:

երկրների համայնքային հաստատությունները ռազմավարության բացակայության պայմաններում վարում էին թույլ գործունեություն, ավելին՝ դրանց ճնշող մեծամասնությունը մարգինալացված էր, չուներ ֆինանսական մեծ կարողություններ և քաղաքական լուրջ ուժ չէր ներկայացնում[1]:

Նկատի ունենալով առկա խնդիրների բազմազանությունը՝ մշակվեցին դրանց լուծմանն ուղղված քայլեր, երկու երկրների սփյուռքերի գործունեությունը կանոնակարգող ընդհանուր ռազմավարություն, որոնք ի հայտ եկած ճգնաժամերին, տարբեր մարտահրավերներին համարժեք արձագանքելու և դրանց դիմակայելու նպատակով ենթարկվեցին որոշակի փոփոխությունների: Քաղաքական օրակարգ մտցվեցին արդեն գլոբալ առաջադրանքների իրացմանն ուղղված նախագծեր, առաջ քաշվեցին համագործակցության նոր մոդելներ և ուղղություններ, որոնք էլ, ըստ էության, երկու երկրների սփյուռքակերտման քաղաքականության մաս կազմեցին: Մասնավորապես, այս հարթությունում ընթացող զարգացումները դուրս եկան երկկողմ ձևաչափից: Երկու երկրների քաղաքական և գիտավերլուծական շրջանակների քննարկումների արդյունքում որոշվեց ընդլայնել միջազգային գործընկերների ընդգրկումը՝ ի դեմս թյուրքախոս երկրների սփյուռքերի: Նկատենք, որ փոխգործակցության մեխանիզմների որոնումներում ներգրավված են պետական և ոչ պետական կառավարման մարմինները, որոնք ձևավորում են ինչպես միասնական օրակարգ (ոլորտային համագործակցություն), այնպես էլ ուղենշում են ոլորտին առնչվող գործողությունների «ճանապարհային քարտեզները»:

Այս քաղաքականությունը մասամբ իրականացվում է 2009թ. նախիջևանյան պայմանագրով ստեղծված թյուրքախոս պետությունները միավորող միջազգային կազմակերպության՝ «Թյուրքական խորհրդի» գործունեության շրջանակներում, որի անդամներն են Թուրքիան, Ադրբեջանը, Ղազախստանը և Ղրղզստանը: Խորհուրդը հիմնադրման օրվանից թյուրքախոս պետությունների միջև որպես համագործակցության հիմք վերցրել էր քաղաքական, տնտեսական (այդ թվում՝ մաքսային), գիտա-

[1] *H.Cabbarlı,* Dünya Azerbaycan ve Türk Diaspora Teşkilatı Başkanlarının I. Formuna Eleştirel Yaklaşım (15.03. 2007), http://atsam.org.az/dunya-azerbaycan-ve-turk-diaspora-teskilati-baskanlarinin-i-formuna-elestirel-yaklasim/?lang=tr

մշակութային և զբոսաշրջության ոլորտները, 2013 թվականից ակտիվ քայլեր ձեռնարկեց նաև անդամ պետությունների սփյուռքերի միջև կապերի ստեղծման և ամրապնդման ուղղությամբ: Մասնավորապես, նույն թվականին «Թյուրքական խորհրդի» անդամ երկրների սփյուռքի գործերով պատասխանատու գերատեսչական կառույցների ղեկավարների անդրանիկ նիստում (Բաքու) հիմնադրվեց «Սփյուռքի գործերի պատասխանատուների կոնտակտային խումբ», որի գործառույթներն ու անդամ երկրների սփյուռքերի հետ կապված գործնական քայլերն ամրագրվեցին «Թյուրքախոս երկրների սփյուռքերի համատեղ գործունեության ռազմավարություն» փաստաթղթում[2]:

Նպատակ ունենալով ակտիվացնել անդամ երկրների սփյուռքերի մասնակցությունը բնակության երկրների քաղաքական, տնտեսական կյանքին՝ խորհուրդն իր աշխատանքները կենտրոնացրեց այնպիսի օրակարգային խնդիրների վրա, ինչպիսիք են տնտեսական ներուժի համախմբումը և գործարարների միջև կապերի ամրապնդումը, իրենց երկրների կամ թյուրքական աշխարհի իմիջի ձևավորմանն ուղղված գործողությունները՝ զանազան միջոցառումների և տեղեկատվական քաղաքականության միջոցով, աշխատանքներ գիտամշակութային և սոցիալ-իրավական խնդիրների տիրույթում:

Խորհուրդը ձգտում է ստեղծել նաև ազդեցիկ լոբբի, և պատահական չէ, որ նրա անդամ պետությունների՝ սփյուռքի հարցերով կառույցները և պատասխանատու պետական մարմինները ռազմավարական նպատակների իրագործման ճանապարհին առաջ քաշեցին հնարավոր տարբերակներ, որոնցից մեկն էլ այնպիսի կազմակերպության ստեղծումն էր, որը ոչ միայն մեկ հովանոցի տակ կհամախմբի թյուրքախոս պետությունների սփյուռքյան համայնքները, այլև կհամակարգի նրանց աշխատանքները: Սույն նկատառումով չորս երկրների սփյուռքերի կազմակերպությունների և պատվիրակների մասնակցությամբ որոշվեց ստեղծել տարածաշրջանային սփյուռքի կենտրոններ: Առայժմ խորհրդին հաջող-

[2] Մանրամասն տե՛ս Türk Keneşi Türk Dilli Diaspora Ortak Faaliyet Stratejisi – 2013, http://www.turkkon.org/Assets/dokuman/DIASPORA_ORTAK_FAALIYET_STRATEJISI_KARAR_TR_20170608_111813.pdf

վել է նման կենտրոն բացել միայն Կիևում (հիմն. 2014թ.), որի կենտրոնական գրասենյակը տեղակայված է Ուկրաինայի ադրբեջանցիների միության շենքում: Կարճաժամկետ հեռանկարում նախատեսվում է նմանատիպ կառույցներ հիմնել նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և Գերմանիայում[3]: Ինչ վերաբերում է Ուզբեկստանին և Թուրքմենստանին, ապա այդ երկրները դեռևս ձեռնպահ են մնում նման ձևաչափով աշխատանքներին մասնակցելուց: Սակայն հաստատության ղեկավարությունը չի բացառում, որ նրանք ապագայում կարող են ընդգրկվել խորհրդի կազմում[4]:

Վերոհիշյալ քաղաքականության դրսևորումները մի փոքր այլ շեշտադրումով տեղ են գտել նաև թուրքական կառավարությանը կից գործող՝ 2010թ. ստեղծված Արտասահմանում բնակվող թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության գործունեությունում, որը, թուրքական համայնքների խնդիրները լուծելուց և համակարգելուց զատ, նաև նպատակ ուներ հակազդել հայկական լոբբիին: Փաստացի «Արդարություն և զարգացում» կուսակցությունը սփյուռքյան քաղաքականությունում սկսեց կիրառել «բարեկամ հասարակություններ» տերմինը, որը տեղ էր գտել դեռևս Մեսութ Յըլմազի կառավարության ծրագրում (1996թ.)[5]:

Վարչության պաշտոնական կայքի «Եղբայրական հասարակություններ» բաժնում նշված է, որ այն տնտեսական, մշակութային, գիտական կապերի ամրապնդման նպատակով պետք է զարգացնի հարաբերությունները էթնիկ և բարեկամ (այստեղ օգտագործված են նաև կրոնակից, լեզվակից, ազգակից անվանումները) հասարակությունների հետ[6]: Համաձայն վարչության նախկին ղեկավար Ք.Յուրթնաչի՝ «բարեկամ հասարակությունների» թվաքանակը գերազանցում է 200 միլիոնը[7]: Ոչ վերջինիս զեկույցում, ոչ էլ կայքում չի հստակեցվում, թե անդրազգային որ

[3] Türk Konseyi, Kiev'de Bölgesel Diaspora Merkezi açtı, http://ukrturk.net/turk-konseyi-kievde-bolgesel-diaspora-merkezi-acti/

[4] Единая тюркская диаспора превратится в серьезную силу - генсек Совета сотрудничества тюркоязычных государств, https://www.trend.az/azerbaijan/society/2163477.html

[5] II. Yılmaz Hükümeti Programı, https://www.tbmm.gov.tr/hukumetler/HP53.htm

[6] Kardeş Topluluklar Vizyonu, https://www.ytb.gov.tr/kardes-topluluklar/genel-bilgi

[7] *K.Yurtnaç*, Turkey's New Horizon: Turks Abroad and Related Communities, Center for Strategic Research of the Ministry of Foreign Affairs of the Republic of Turkey, SAM Papers, Oct. 2012, no. 3, p. 9, http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/10/SAM_paper_ing_03.pdf

հանրություններն են, որոնք ընկալվում են որպես «բարեկամ հասարակություններ»: Մասնագետների գնահատականով՝ այս երկիմաստ ձևակերպումները Թուրքիայի գիտակցված ընտրությունն են, որն ունի մի քանի պատճառներ. ա) Թուրքիայի պետական գործիչներն ընդունում են, որ անդրսահմանային բնակչության ներգրավումը (որը չի հանդիսանում Թուրքիայի քաղաքացի կամ Թուրքիայի միգրանտ) միջպետական լարվածություն առաջացնելու մեծ պոտենցիալ ունի: Հետևաբար, նման անորոշությունը պայմանավորված է Թուրքիայի և ընդունող պետությունների միջև լարվածությունից խուսափելու ձգտմամբ, բ) նման մոտեցումը Թուրքիային քաղաքական ճկունության և մանևրելու հնարավորություններ է ընձեռում[8]:

Աչքի անցկացնելով իրականացվող նախագծերի աշխարհագրական սահմաններն ու էթնիկական շրջանակները՝ ակնհայտ է դառնում, որ վարչության աշխատանքները, մի կողմից, կապված են թյուրքախոս պետությունների և նրանց սփյուռքերի, այդ թվում նաև այնպիսի թյուրքական ժողովուրդների հետ, որոնք պետականազուրկ են (մեսխեթի թուրքեր, թուրքոմաններ, ույղուրներ և այլն), մյուս կողմից՝ Բալկանների, Կենտրոնական Ասիայի, Մերձավոր Արևելքի և աֆրիկյան տարածաշրջանների մի քանի երկրների ազգաբնակչության հետ: 2016թ. թուրքական կառավարության ծրագրում, որտեղ Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ սփյուռքի հետ կապված քաղաքականությանը հատկացվել էր 4 էջ, ձևակերպված են այդ քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունները, թիրախային ուղղությունները, նպատակները, աշխատանքների իրագործման բնագավառները: Ծրագրի կետերը վերաբերում են ինչպես բուն թուրքական սփյուռքին, այնպես էլ «բարեկամ հասարակություններին»: Օրինակ՝ «Քաղաքացիական հասարակության ակադեմիա», «Լիդերության ակադեմիա», «Մեդիաակադեմիա» և զանազան նախագծերով խնդիր է դրված զարգացնել հարաբերությունները «բարեկամ հասարակությունների» հետ: Այս գործում

[8] *Я.Волкова*, Турция как родственное государство: формирование связей с родственным населением в постбиполярный период, Наукові записки Міжнародного гуманітарного університету: [збірник], Одеса: Фенікс, 2016, вип. 25, с. 129.

կարևոր տեղ է հատկացվում վերոգրյալ տարածաշրջանների մեջ մտնող, թուրքական կողմի համար հետաքրքրություն ներկայացնող երկրների պետական ուղեղային կենտրոններին, որոնք Թուրքիայի նմանատիպ հաստատությունների հետ համատեղ մշակում են կապերի ամրապնդման ու զարգացման ծրագրեր, որոնք իրականացվում են «Ուղեղային կենտրոնների համագործակցություն» հարթակի շրջանակներում:

Կարևոր է փաստել, որ այս քաղաքականությունից անմասն չեն գիտակրթական և տեղեկատվական ոլորտները: Օրինակ, կրթաթոշակներ են տրամադրվում վերոհիշյալ տարածաշրջանների ուսանողներին՝ Թուրքիայում բարձրագույն կրթություն ստանալու համար: Մասնավորապես, «Տեղում կրթաթոշակ» նախագծը ներդրվելու է մեսխեթի թուրքերի, Սիրիայի և Իրաքի թուրքմանների շրջանում: Ինչ վերաբերում է լրագրողական և ընդհանրապես մեդիա-ոլորտում համագործակցությանը, ապա սույն թվականի փետրվար ամսին Արտասահմանում բնակվող թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչությունը՝ «Սփյուռքի հետ համագործակցության ծրագրի» շրջանակներում, «Անադոլու» լրատվական գործակալության և Թուրքական համագործակցության ու համակարգման գործակալության հետ համատեղ դիվանագիտական լրագրության ասպարեզում անցկացրել են նախապատրաստական դասընթացներ Ադրբեջանից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Մոնղոլիայից Վրաստանից, Ուկրաինայից և այլ երկրներից մասնակցություն ունեցող լրագրողների շրջանում[9]: Կարող ենք նշել, որ Արտասահմանում բնակվող թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչությունն իրագործում է աշխատանքներ երեք հիմնական տիրույթներում. ա) Թուրքիա-թուրքական սփյուռք հարաբերությունների զարգացում, բ) թյուրքախոս պետությունների սփյուռքերի և ժողովուրդների համախմբում և կապերի ամրապնդում (այդ թվում՝ ժողովրդագրական ատլասի կազմում, համընդհանուր կոնսոլիդացման համար թեզերի և կարգախոսների մշակում և այլն), գ) համագործակցություն այլ երկրներ սփյուռքերի հետ (սոմալիական, հունգարական, բոսնիական և այլն):

[9] Турецкая диаспора намерена сотрудничать с диаспорами братских стран, https://azertag.az/ru/xeber/Tureckaya_diaspora_namerena_sotrudnichat_s_diasporami_bratskih_stran-1135279

Թյուրքախոս երկրների սփյուռքերի՝ միմյանց ինտեգրելու և տարբեր մակարդակներում նրանց միջև համագործակցության հնարավորությունները գնահատելու նպատակով աշխատանքներ են կատարվում նաև ռազմավարական մշակումների գծով մասնագիտացված թուրքական հետազոտական հաստատություններում: Վերջին տարիներին հատկապես Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, որն ինտելեկտուալ և նյութական աջակցություն է ստանում Թուրքիայի պետական գերատեսչական կառույցների, մեդիա-հոլդինգների և բիզնես շրջանակների կողմից, 2010 թվականից ի վեր անց է կացնում համաշխարհային թյուրքերի խնդիրներին նվիրված ֆորումներ: Այստեղ պետական պաշտոնյաներն ու փորձագետները, խորհրդակցելով սփյուռքի ներկայացուցիչների հետ որոշ հարցերի վերաբերյալ, մասնակիորեն ճշգրտել և հստակեցրել են խնդրի մասշտաբներն ու դրանց բնույթը: Ընդհանուր առմամբ, թյուրքախոս պետությունների սփյուռքերի միջև համագործակցության ուղղությամբ գաղափարներ գեներացնող այս կենտրոնն առաջ է քաշել այսպես կոչված «թյուրքական սփյուռքի» ռազմավարական համատեղ կառավարման տեսլականը: Համաձայն վերջինիս՝ «թյուրքական սփյուռքը» կենսական նշանակություն ունի Թուրքիայի և թյուրքական աշխարհի համար, հետևաբար, կառուցվածքային տեսանկյունից կարիք կա այն վերաձևավորելու, որպեսզի նրա անդամներն ավելի արդյունավետ ինտեգրվեն այն երկրների սոցիումում, որտեղ բնակվում են: Այդպիսով կարող են ներդրում ունենալ իրենց առնչվող տարածաշրջանային և գլոբալ հարցերի լուծման գործում: Մինչև այս վերաձևավորումները չիրականացվեն, հնարավոր չէ խոսել ոչ միայն սփյուռք(եր)ի անդամների՝ մի շարք գործընթացներում ակտիվ մասնակցության, այլև ռազմավարական համատեղ կառավարման մասին[10]:

Միևնույն ժամանակ, հետազոտական կենտրոնը, կարևորելով թյուրքական աշխարհին վերաբերող խնդիրների լուսաբանումը, անհրաժեշտ է համարում բարձրացնել դրանց արդյունավետության մակարդակը՝ տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառելիու-

[10] http://tasam.org/Files/Etkinlik/File/VizyonBelgesi/DTF5_Vizyon_TR_pdf_0ba46c0f-5d28-4d14-b18b-83aaf0f1294f.pdf

թյան տեսանկյունից, մասնավորապես պետական մակարդակով նպաստել թվային դիվանագիտության (*Digital diplomacy*) խթանմանը, որը ենթադրում է այս գործընթացներում ընդգրկված համապատասխան գերատեսչությունների ակտիվ ներգրավումը սոցիալական ցանցերում (*facebook, twitter, youtube* և այլն)՝ պաշտոնական էջերի բացմամբ և դրանց գործունեության ակտիվացմամբ:

Ամփոփելով սփյուռքյան քաղաքականության որոշ առանձնահատկությունների դիտարկումը և մի շարք ուղղություններով իրագործված աշխատանքները՝ կարելի է ասել, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունում այն համեմատաբար նոր է, դրանում ներգրավված կառույցների փոխհարաբերությունները կրում են հորիզոնական բնույթ: Փաստացի, թյուրքախոս պետությունների սփյուռքերի հետ համագործակցության նպատակով և դրան ուղղված գիտամշակութային, տնտեսական, տեղեկատվական և այլ նախագծերի իրագործմամբ կողմերը ձգտում են հասնել հարաբերությունների ռազմավարական խորության:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ

Սամվել Մանուկյան[*], *Դիանա Գալստյան*[**]

Խնդիրը

Ազգերի և պետությունների միջև մրցակցությունում կարևոր նշանակություն ունի, թե ինչ արժեքային համակարգում է վերարտադրվում և զարգանում ազգային ինքնությունը, որքանով է այն կայուն և ունակ արձագանքելու տարաբնույթ սպառնալիքներին: Ներկայում, տեղեկատվական պատերազմների ժամանակաշրջանում, ազգային ինքնության սպառնալիքների նշանակալի մասը բխում է տվյալ ազգը պարուրող ինֆորմացիոն դաշտից: Այս խնդիրն առավել ևս կարևոր է Հայաստանի համար, որը գտնվում է Ադրբեջանի դեմ անավարտ պատերազմական վիճակում: Հայտնի է, որ հեռուստատեսությունը դեռևս մնում է Հայաստանի տեղեկատվական դաշտը ձևավորող կարևորագույն ինֆորմացիոն աղբյուրը[1]: Հիմքեր կան ենթադրելու, որ Ադրբեջանում նույն պատկերն է[2]:

Հոդվածում դիտարկվում է Հայաստանի և Ադրբեջանի հիմնական հեռուստաալիքների համեմատական նկարագիրն այն տեսակետից, թե որքանով են դրանք իրականացնում հասարակության մշակութային-լուսավորչական-դաստիարակչական ֆունկցիան: Այդ նպատակով բովանդակային վերլուծության են ենթարկվել Ադրբեջանի և Հայաստանի առավել դիտվող հեռուստաալիքների ծրագրերը:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ, սոց.գ.թ.:
[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

[1] *Մանուկյան Ս.,* Հեռուստալսարանի դինամիկան Հայաստանում 2012-2016թթ., // «21-րդ ԴԱՐ», 6 (76), 2017, էջ 4-18:

[2] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների «Կովկասյան բարոմետր» 2013 հետազոտության արդյունքներով հեռուստատեսությունը Հայաստանում իրավական տեղեկությունների աղբյուր է նշել 18+ բնակչության 84%-ը, իսկ Ադրբեջանում՝ 85%-ը:

Տվյալները

Հետազոտությունը հիմնված է ադրբեջանական չորս (*Aztv, ATV, Naxçıvan Dövlət Televizyası* և *ICTIMAI*) և հայկական երկու (Հ1 և «Արմենիա») հեռուստաալիքների մեկ շաբաթվա հեռուստահաղորդումների ծրագրերի վերլուծության վրա: *Aztv*-ն Ադրբեջանի պետական հեռուստաալիքն է՝ հայկական Հ1-ի անալոգը: *ICTIMAI*-ն (Ադրբեջանի հանրային հեռուստատեսություն) առավել դիտվող հեռուստաալիքն է՝ իր լսարանի չափերով հայկական «Արմենիայի» անալոգն է: Ադրբեջանական *ATV*-ն առավելապես երիտասարդական լսարանին ուղղված հեռուստաալիք է, որը նման է հայկական՝ նույնպես *ATV* ալիքին: *Naxçıvan Dövlət Televizyası*-ն Նախիջևանի Ինքնավար Հանրապետության պետական հեռուստաալիքն է:

Ադրբեջանական հեռուստաալիքները դիտարկվել են 2018թ. մարտի 19-25, իսկ հայկականները՝ ապրիլի 2-8 ժամանակահատվածներում:

Արդյունքները

Ադրբեջանական հեռուստաալիքները մշակութային-լուսավորչական հաղորդումներին նշանակալիորեն ավելի շատ ժամեր են տրամադրում, քան հայկական հեռուստաալիքները: Մասնավորապես, դիտարկվող շաբաթվա ընթացքում *Aztv* ալիքն այդ հաղորդումներին տրամադրել է մոտ 46 ժամ, *ICTIMAI* ալիքը՝ մոտ 44 ժամ, *Naxçıvan* ալիքը՝ մոտ 41 ժամ, *ATV*-ն՝ 20.35 ժամ, այն դեպքում, երբ Հ1-ը մշակութային-լուսավորչական-դաստիարակչական հաղորդումներին դիտարկված շաբաթում տրամադրել է մոտ 21 ժամ, իսկ «Արմենիան»՝ մոտ 6 ժամ (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1



Մշակութային-լուսավորչական-դաստիարակչական հեռուստահաղորդումների կառուցվածքային միավորների դիտարկումից ստացվել է հետևյալ պատկերը.

Ազգագրական հաղորդումներ. Ազգային ինքնությունը ճանաչվում և արտահայտվում է առաջին հերթին ազգային սովորույթներով, ավանդույթներով, երաժշտությամբ, բանահյուսությամբ, տարազով, ծեսերով և տոներով: Կոնկրետ ազգը որպես եզակի մարդկային հանրույթ վերարտադրվում է՝ ճանաչելով իր արմատները: Հեռուստատեսությունն ազգագրական հաղորդումների միջոցով ունակ է նպաստելու այդ գործընթացին:

Այս տեսակետից ադրբեջանական հեռուստաալիքները բացարձակ գերակշռում են հայկական ալիքների նկատմամբ: Դիտարկվող շաբաթվա ընթացքում *Aztv*-ն ազգագրական հաղորդումներ է հեռարձակել մոտ 17 ժամ, *Naxçıvan* ալիքը՝ մոտ 16 ժամ, *ICTIMAI*-ն՝ 5 ժամ, *ATV*-ն՝ 3.30 ժամ, իսկ հայկական ալիքներում այդպիսի հաղորդումները բացակայել են (Աղյուսակ 1):

Ադրբեջանական հեռուստաալիքներով հեռարձակված ազգագրական հաղորդումների օրինակներ են «Ապրենք մեր բանահյուսության աշխարհում» հաղորդաշարը (*Naxçıvan*), «Նովրուզի ավանդույթներ», «Ադրբեջանական գորգեր», «Ադրբեջանական ազգային պարեր» փաստագրական ֆիլմերը (*Naxçıvan*), «Մուղամի աշխարհ» հաղորդումը (*Aztv*):

Աղյուսակ 1

Հաղորդման տիպ	Ադրբեջանական ալիքներ				Հայկական ալիքներ	
	Aztv	ATV	Naxçıvan	ICTIMAI	Հ1	Արմենիա
Ազգագրական	17:10	3:30	16:15	5:00	0:00	0:00
Հայրենագիտական	2:20	3:05	2:50	3:45	3:35	0:00
Սկանալոր դեմքեր	13:35	0:00	5:15	13:10	4:10	1:50
Մշակութային	12:25	0:00	5:30	5:40	1:10	0:15
Կոնցերտային հաղորդումներ	0:00	8:15	0:00	0:00	0:00	0:00

Հայրենագիտություն. Հայկական Հ1-ը դիտարկված շաբաթվա ընթացքում հայրենագիտական հաղորդումներին («Հայաստանի ճամփեքով» և «Ճանապարհ» հաղորդաշարեր) տրամադրված ժամաքանակով՝

3.30 ժամ, մի փոքր գերազանցել է բոլոր դիտարկված ադրբեջանական ալիքներին: Հայկական մյուս ալիքը՝ «Արմենիան», դիտարկված շաբաթվա ընթացքում հայրենագիտությանը չի անդրադարձել:

Հայրենագիտական հաղորդումներ հեռարձակել են ադրբեջանական բոլոր դիտարկված հեռուստաալիքները, մասնավորապես՝ *ICTIMAI*-ն դրանց հատկացրել է 3.45 ժամ, *ATV*-ն՝ 3 ժամ, *Naxçıvan*-ը՝ մոտ 3 ժամ, *Aztv*-ն՝ 2.20 ժամ: Ադրբեջանական հեռուստաալիքներում հայրենագիտական թեմային առնչվող հաղորդաշարերից են՝ «Ադրբեջան՝ երկիր հայրենի» (*Aztv*), «Ճանաչենք մեր երկիրը» (*Naxçıvan*), «Հետաքրքիր ճանապարհորդություն» (*ICTIMAI*):

Ականավոր դեմքեր. Ազգն իր արժանապատվությունն է ձեռք բերում, իր հասարակությանը, հատկապես երիտասարդությանը կյանքի ուղենիշներ և իդեալական քաղաքացու նմուշներ է տրամադրում, արժանապատվորեն համամարդկային մշակույթ է ընդգրկվում իր ականավոր դեմքերով՝ գիտնականներով, գրողներով, կոմպոզիտորներով, զինվորականներով, պատմական քաղաքական և հասարակական դեմքերով:

Ազգային ականավոր դեմքերին նվիրված հաղորդումների տեսակետից ադրբեջանական ալիքները, հատկապես երկու ամենախոշորները՝ *Aztv* և *ICTIMAI* ալիքները, նշանակալիորեն գերազանցում են հայկական ալիքները: Մասնավորապես, դիտարկված շաբաթվա ընթացքում *Aztv*-ն ականավոր դեմքերին է հատկացրել մոտ 13.35 ժամ, *ICTIMAI*–ն՝ մոտ 13.10 ժամ, *Naxçıvan* ալիքը՝ մոտ 5 ժամ, այն դեպքում, երբ Հ1-ը՝ մոտ 4 ժամ («Տան մեծը», «Մերոնք»), իսկ «Արմենիան»՝ մոտ 2 ժամ («Ծագումով հայեր»): Ադրբեջանական հեռուստաալիքներով ցուցադրվում են ինչպես ականավոր դեմքերի մասին պատմող հաղորդաշարեր՝ «Հեռուստատեսային դիմանկար» (*ICTIMAI*), «Հանրաճանաչ դեմքեր» (*Aztv*), այնպես էլ ականավոր դեմքերին նվիրված մեծ քանակով փաստագրական ֆիլմեր, օրինակ՝ «Խան Շուշինսկի», «Հաջիբաբա Հուսեյնով» (*ICTIMAI*), «Աշուղ Շաքիր» (*Aztv*), Նարիման Նարիմանով» (*Naxçıvan*) և այն:

Մշակութային հաղորդումներ. Այս հաղորդումների շարքում ընդգրկվել են արվեստի տարբեր ուղղությունների, մշակույթի պատմության վերաբերյալ ճանաչողական, կիրառական արվեստի վերաբերյալ հաղոր-

դումները։ Հայկական հեռուստաալիքներից Հ1-ը դիտարկված ժամանակահատվածում ցուցադրել է «Արվեստը և իրականությունը» հաղորդաշարը։ Ադրբեջանական հեռուստաալիքներով հեռարձակվող մշակութային հաղորդումներից են՝ «Ադրբեջանական գորգեր, Նախիջևանյան խումբ» (*Naxçıvan*), «Ծանոթացեք. Ռուդաբե Մուրադովա» (*ICTIMAI*), «Ադրբեջանական գորգեր» (*ICTIMAI*), «Մարգարտագործությունը Նախիջևանում» (*Naxçıvan*), «Ադրբեջանական մանրանկարչությունը աշխարհի թանգարաններում» (*ICTIMAI*) և այլն։

Կանանց լսարանին ուղղված հաղորդումներ

Հետազոտությամբ դիտարկվել են կանանց ուղղված հաղորդումները և դրանց բովանդակությունը։ Կանանց դաստիարակությանն ուղղված հաղորդումներ գրանցվել են ադրբեջանական *ATV* (առավելապես երիտասարդական լսարանին ուղղված) հեռուստաալիքում՝ 8.15 ժամ։ Կանանց ուղղված ադրբեջանական հաղորդումների օրինակներ են «Մայր-երեխա», «Կինը», «Հինգ հարսնացու» հաղորդաշարերը[3]։ Դիտարկվող ժամանակահատվածում հայկական հեռուստաալիքներով այդպիսի հաղորդումներ չեն գրանցվել։

Դասական երաժշտություն. Հասարակության վերնախավի դաստիարակության և հասարակության ընդհանուր մշակութային մակարդակի բարձրացման հարցում կարևոր նշանակություն ունի ազգային և համաշխարհային դասական երաժշտությունը։ Ազգային դասական երաժշտությունը նաև ազգի այցեքարտն է համաշխարհային *բարձր մշակույթում*։

Դիտարկված ժամանակահատվածում դասական երաժշտություն է հաղորդվել ադրբեջանական *ICTIMAI* ալիքով՝ 4.40 ժամ և *Naxçıvan* ալիքով՝ մոտ 1 ժամ։ Ընդ որում, վերջինը մանկական ֆիլհարմոնիայի համերգ էր։ Հաղորդվել են նաև «Լեյլի և Մեջնուն» օպերան (*ICTIMAI*), ինչպես նաև Ադրբեջանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգները (*ICTIMAI*)։

[3] Վերջինը շաբաթական հաղորդում է, որին մասնակցում է 5 երիտասարդ աղջիկ Ադրբեջանի տարբեր շրջաններից, ովքեր մեկ շաբաթվա ընթացքում մրցում են «իսկական հարս» կոչմանն արժանալու համար։ Նրանց սովորեցնում են պատրաստել տարբեր ուտեստներ, կատարել տան և ընտանիքի հետ կապված աշխատանքներ։ Շաբաթվա վերջում ընտրվում է հաղթողը։ Ի հակադրություն կարելի է նշել հայկական մի ալիքով տրվող հաղորդում, որտեղ միմյանց դիմաց նստած երիտասարդ տղան և աղջիկը հաղորդավարի տրված հարցին ճիշտ պատասխանելու դեպքում իրավունք են ստանում դիմացինի վրա բաժակով ջուր լցնել։

Հայկական ալիքներից դասական երաժշտություն է հաղորդել Հ1-ը՝ «Տրավիատա» օպերան:

Հաղորդման տիպ	Ադրբեջանական ալիքներ				Հայկական ալիքներ	
	Aztv	ATV	Naxçıvan	KTIMAI	Հ1	Արմենիա
Դասական երաժշտություն	0:00	0:00	0:50	4:40	1:20	0:00
Սերիալներ	0:00	15:20	0:00	0:00	14:45	74:50
Սիթքոմ	0:00	6:00	0:00	0:00	5:20	13:50
Հեռուստաթատրոն	7:45	0:00	1:30	0:00	0:00	0:00
Մանկական	0:00	6:00	9:30	6:40	10:30	0:00
Ռազմահայրենասիրական	1:00	0:00	1:20	1:05	2:10	0:00

Սերիալներ. Այստեղ առաջնությունը հայկական հեռուստաալիքներինն է: «Արմենիան» շաբաթվա ընթացքում սերիալ է հեռարձակել մոտ 75 ժամ (ամբողջ շաբաթն ունի 168 ժամ), իսկ Հ1-ը՝ մոտ 15 ժամ: Չորս ադրբեջանական ալիքներից շաբաթվա ընթացքում սերիալներ է ցուցադրել միայն *ATV*-ն՝ մոտ 15 ժամ:

Հարկ է նշել, որ ադրբեջանական *ATV*-ն հեռարձակել է միայն ադրբեջանական սերիալներ («Եղբայրներ», «Աղջկա հայրը», «Ամուսիններ»): Հ1-ը հեռարձակել է հայկական («Ճակատագրի պատասխանը») և օտարերկրյա «Վրեժը» սերիալները: «Արմենիան» հեռարձակել է 57 ժամ հայկական («Եղնիկների կածանը», «Եղբայրներ», «Հրեշների գայլը», «Ուր է իմ տղամարդը», «Նռան հատիկ») և մոտ 18 ժամ՝ հնդկական սերիալ («Ի՞նչ կոչել այս սերը 2»):

Սիթքոմներ[4]. Այստեղ նույնպես առաջնությունը հայկական հեռուստաալիքներինն է: «Արմենիան» սիթքոմ է հեռարձակել մոտ 14 ժամ («Ազիզյանները 2», «Չեյնջ»), իսկ Հ1-ը՝ մոտ 5 ժամ («Տանդեմ»): Ադրբեջանական ալիքներից սիթքոմ հեռարձակել է միայն *ATV*-ն՝ 6 ժամ («Բաջանաղներ»):

Հեռուստաթատրոն. Հեռուստաթատրոնի ներկայացումներ են հեռարձակել ադրբեջանական *Aztv*-ն՝ մոտ 8 ժամ և *Naxçıvan*-ը՝ մոտ 1:30 ժամ: Հայկական ալիքները դիտարկված շաբաթվա ընթացքում հեռուստաթատրոն չեն հեռարձակել:

Մանկական հաղորդումներ. Հայկական հեռուստաալիքները մանկական հաղորդումներ չեն հեռարձակել, իսկ ադրբեջանական ալիքներից *Naxçıvan*-ը հեռարձակել է մոտ 3.30 ժամ («Մանկական հաղորդում» և

[4] Սիթքոմ (անգլ.՝ *sitcom - situation comedy* ՝կատակերգություն ըստ իրավիճակի), հումորային ժանր հեռուստատեսությունում և ռադիոյում, որում գործողությունները տեղի են ունենում սահմանափակ քանակով վայրերում (օրինակ՝ բնակարան, աշխատավայր, դպրոց և այլն):

ICTIMAI-ն՝ մոտ 2 ժամ («Մանուկների ժամ»)։ Ադրբեջանական ալիքները հեռարձակել են մուլտֆիլմեր. *ATV*-ն՝ 6 ժամ, *Naxçıvan*-ը՝ 6 ժամ, *ICTIMAI*-ն՝ 4.30 ժամ։ Հայկական ալիքներից մուլտիպլիկացիոն կինոնկար հեռարձակել է միայն Հ1-ը՝ 10.30 ժամ։

Ռազմահայրենասիրական հաղորդումներ. Դիտարկված ժամանակահատվածում ռազմահայրենասիրական հաղորդումներ հեռարձակել են երեք ադրբեջանական հեռուստաալիքները՝ *ICTIMAI*-ն՝ 1 ժամ («Բարև, զինվոր»), *Aztv*-ն՝ 1 ժամ՝ («Ծառայում եմ Ադրբեջանի Հանրապետությանը»), *Naxçıvan*-ը՝ 1.20 ժամ («Տոնդ շնորհավոր, ադրբեջանցի զինվոր») և հայկական Հ1-ը՝ 2.10 ժամ («Զինուժ», «Նվիրյալները»)։

Եզրակացություններ

Ադրբեջանական և հայկական առավել մեծ լսարան ունեցող հեռուստաալիքների համեմատությունը ցույց է տալիս, որ ադրբեջանական հեռուստաալիքներն ունեն *ազգակերտման և ազգային կոնսոլիդացման հստակ ինֆորմացիոն քաղաքականություն*։ Այդ քաղաքականության բաղադրիչներն են.

- Ազգագրական հաղորդումների միջոցով ադրբեջանցու՝ որպես միասնական ազգի, մշակութային հիմքի կազմավորումը։
- Հայրենագիտական հաղորդումների միջոցով ադրբեջանցու աշխարհի պատկերում ներկայիս Ադրբեջանի տարածքը որպես նրա հայրենիք դիրքավորումը։
- Ականավոր դեմքերի վերաբերյալ հեռուստատեսային հաղորդումների միջոցով կառուցվում է ադրբեջանցի ազգի ժամանակի և տարածության մեջ դիրքավորված և ազգային միասնականությունը կազմավորող պանթեոնը։
- Մշակութային հաղորդումների միջոցով յուրացվում և ազգայնացվում է Ադրբեջանի տարածքում այլ ազգերի, հատկապես հայերի մշակութային ժառանգությունը։
- Կանանց լսարանին ուղղված հաղորդումների միջոցով սահմանվում են կնոջ կարևոր տեղն ու դերն ադրբեջանական ազգի կառուցվածքում, կազմավորվում է այնպիսի կնոջ կերպար, ով իր մեջ կրում և իր երեխաներին է փոխանցում ադրբեջանական ազգի այնպիսի

նորացված և ընդլայնված ինքնությունը, որն ունակ է, մի կողմից՝ դիմակայելու ժամանակակից գլոբալիստական սպառնալիքներին, իսկ մյուս կողմից՝ դինամիկ զարգանալու:

- Հեռուստաթատրոնի միջոցով ադրբեջանական [պետական] հեռուստատեսությունն իրականացնում է սովետական Ադրբեջանի մշակութային ժառանգության[5] ինտեգրումը ժամանակակից Ադրբեջանի մշակութային տարածքում և ազգային գիտակցությունում:

Ազգի մշակութային-լուսավորչական-դաստիարակչական քաղաքականության առկայությունը մեծ լսարան ունեցող հայկական հեռուստաալիքներից Հ1-ում է արտահայտված, սակայն իր ինտենսիվությամբ (այդ հաղորդումներին տրվող ժամերի քանակով) նշանակալիորեն զիջում է ադրբեջանական մեծ լսարան ունեցող ալիքներին:

Ինչ վերաբերում է «Արմենիա» հեռուստաալիքին, ապա ազգի մշակութային դաստիարակության հարցում դրա հսկայական ներուժը դեռևս չի կիրառվում:

Վերջում հարկ է նշել, որ մեր դիտարկումներով՝ հայաստանյան հեռուստաալիքների շարքում կան այնպիսիները, որոնք ստեղծում և հեռարձակում են լայն սպեկտրով բարձրորակ հեռուստահաղորդումներ, որոնք ունակ են դաստիարակելու բազմակողմանի և զարգացած, ազգային մտա- և հոգեկերտվածքով քաղաքացիներ, օրինակ՝ «Ար», «Արմենիա», «Շողակաթ», «Երկիր Մեդիա»: Սակայն այդ հեռուստաալիքների լսարանները շատ փոքր են նշված ֆունկցիաները բավարար մասշտաբով իրականացնելու համար[6]:

[5] Ադրբեջանցի ազգն, ըստ էության, կազմավորվել է Սովետական Միության կազմում: Խորհրդային ժամանակաշրջանում է ստեղծվել Ադրբեջանի մշակույթի նշանակալի հատվածը, ընդ որում՝ մեծ մասամբ այդտեղ բնակվող այլ ազգերի՝ հայերի, ռուսների, հրեաների կողմից: Այսօր Ադրբեջանը հստակ նպատակաուղղված և հետևողականորեն իրականացվող քաղաքականությամբ յուրացնում է այդ մշակութային ժառանգությունը:

[6] *Մանուկյան Ս.,* Հեռուստալսարանի դինամիկան Հայաստանում 2012-2016թթ., // «21-րդ ԴԱՐ», 6 (76), 2017, էջ 4-18:

ԱԷՄԳ-Ն ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արմեն Մանվելյան[*]

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամբողջ աշխարհում սկսեցին բուռն զարգանալ միջուկային տեխնոլոգիաները: 1945թ. օգոստոսին ԱՄՆ-ի կողմից ճապոնական Հերոսիմա և Նագասակի քաղաքների նկատմամբ միջուկային զենքի կիրառումը պատճառ հանդիսացավ, որպեսզի ԽՍՀՄ-ն արագացնի նոր միջուկային զենքի ստեղծման ծրագրերը: 1949թ. օգոստոսի 2-ին Ղազախստանի Սեմիպալատինսկ ռազմավարժարանում ԽՍՀՄ-ն առաջին անգամ փորձարկեց ատոմային ռումբը[1]:

ԽՍՀՄ-ի կողմից ատոմային ռումբի փորձարկումից հետո սկսվեց միջուկային մրցավազքի նոր շրջան, որը ոչ միայն սրեց հարաբերությունները երկու գերտերությունների միջև, այլև զարկ տվեց զարգացման նոր ժամանակահատվածի, որը կարող ենք կոչել միջուկային դարաշրջան: Ատոմային տեխնոլոգիաներն առաջ բերեցին գիտության և արդյունաբերության զարգացման նոր ուղղություն, որին տիրապետելը նշանակում էր մաս կազմել միջուկային զենքի տիրապետող աշխարհի ամենահեղինակավոր պետությունների ակումբին: Սա ուղղակի արդյունաբերություն չէր, այլ հզորության ցուցանիշ, որը փորձում էին ունենալ բոլոր մեծ տերությունները:

Ատոմային զենքի ստեղծումը և, ընդհանրապես, ուրանի հարստացման տեխնոլոգիան հնարավորություն տվեցին զարգացնել նաև այսպես կոչված խաղաղ ատոմային ծրագրեր: Միջուկային զենքի մրցավազքին զուգահեռ, սկսվեց ատոմային էներգիա ունենալու նոր պայքար, որն ուղեկցվում էր միջուկային կայանների կառուցման գործընթացով: Այս մր-

---

[*] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության մասնագետ, պ.գ.թ.:

[1] *Гончаров Г.А., Рябев Л.Д.,* О создании первой отечественной атомной бомбы // Успехи физических наук, т. 171, № 1, с. 79—104

ցակցությունը նպաստեց այդ նոր տեխնոլոգիաների զարգացմանը և դրա խորքային տիրապետմանը, ինչն արդյունաբերական այդ դարաշրջանում ռազմավարական-անվտանգային նշանակություն ուներ:

Բացի այդ, արդյունաբերության բուռն զարգացումն ուղեկցվում էր էլեկտրաէներգիայի պահանջարկի և սպառման անընդհատ աճով՝ երկնիշ ցուցանիշներով, ինչը նշանակում էր, որ այդ տեխնոլոգիաները տալիս էին մրցակցային առավելություն շուկայում, որը նույնպես ռազմավարական նշանակություն ուներ մեծ տերությունների համար:

Առաջին ատոմային ռեակտորը ԽՍՀՄ-ում կառուցվեց Օբնինսկ քաղաքում, որտեղ սովետական գիտնականներն իրականացնում էին ուրանի հարստացման և դրա հիման վրա նոր վառելիքի ստեղծման առաջին փորձերը: Առաջին ռեակտորը շահագործման հանձնվեց 1954թ. հունիսի 24-ին, սա ԽՍՀՄ գիտության լրջագույն հաջողությունն էր, և մյուս պետությունները ևս անմիջապես ձեռնամուխ եղան միջուկային ռեակտորների կառուցման գործընթացին[2]:

1956թ. Մեծ Բրիտանիայում շահագործման հանձնվեց ատոմային առաջին կոմերցիոն ռեակտորը, որի հզորությունը 50 մվտ էր, հետագայում այն հասցվեց մոտ 200 մվտ-ի: Մեկ տարի անց՝ 1957թ. դեկտեմբերին, ԱՄՆ Փենսիլվանիա նահանգում, շահագործման հանձնվեց ամերիկյան առաջին միջուկային կայանը: Ամերիկյան առաջին պետական կառույցը, որը սկսեց օգտագործել միջուկային էներգիա, ԱՄՆ ռազմածովային նավատորմն էր, որը 1954թ. շահագործման հանձնեց առաջին միջուկային սուզանավը՝ «Նաուտիլիուսը»: Վերջիններս ակտիվ կերպով սկսեցին կառուցել առաջին ռազմածովային նավերը՝ ավիակիրները, որոնք նույնպես աշխատում էին միջուկային վառելիքով[3]:

Միջուկային նոր տեխնոլոգիաների շուրջ սկսված մրցակցությունը մեծ տերություններին ստիպեց նաև ընդհանուր համաձայնության գալ, քանի որ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, մրցակցելով միմյանց հետ, այնուամենայնիվ, ունեին ընդհանուր շահեր, նրանք չէին ցանկանում, որ այդ տեխնոլոգիանե-

[2] *B.A. Semenov,* Nuclear power in the Soviet Union , IAEA BULLETIN, vol. 25, No. 2, pp. 47-60. https://www.iaea.org/sites/default/files/25204744759.pdf

[3] *Benjamin K. Sovacool*, The National Politics of Nuclear Power, Routledge, p. 68.

ը տարածվեն կամ խաղաղ ատոմի համար նախատեսված ուրանի հարստացման ծրագրերն օգտագործվեն միջուկային զենք ստեղծելու համար:

Միջուկային զենքի տարածման և ընդհանրապես միջուկային տեխնոլոգիաների նկատմամբ վերահսկողությունն էր պատճառներից մեկը, որը ստիպեց կողմերին փորձել ընդհանուր հայտարարի գալ և ստեղծել կառույց, որը կվերահսկի միջուկային արդյունաբերությունը՝ կայաններին, ռեակտորների կառուցումն աշխարհում: 1953թ. դեկտեմբերի 8-ին ԱՄՆ նախագահ Դ.Էյզենհաուերը, ելույթ ունենալով Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր ասամբլեայում, առաջին անգամ իր ելույթում խոսեց ՄԱԿ շրջանակներում միջազգային ատոմային հատուկ կառույցի ստեղծման անհրաժեշտության մասին: Իր ելույթում ԱՄՆ նախագահն անհանգստություն հայտնեց, որ եթե ատոմային խաղաղ տեխնոլոգիաները և արդյունաբերությունը հայտնվեն անբարեխիղճ կառավարությունների ձեռքում, ապա կարող են օգտագործվել միջուկային զենքի ստեղծման համար, ինչն արդեն վտանգավոր է ողջ մարդկության համար: ԱՄՆ նախագահը նաև կոչ էր անում ԽՍՀՄ-ին՝ միանալ այս ծրագրին և պատրաստակամություն էր հայտնում երկկողմ մակարդակով սկսել բանակցություններ այն պետությունների հետ, որոնք հետաքրքրված են այս ծրագրով և ընդհանրապես խաղաղ ատոմի զարգացման հեռանկարով[4]:

Համարվում է, որ ԱՄՆ նախագահի այս ելույթը հիմք հանդիսացավ, որպեսզի միջուկային զենք և տեխնոլոգիաներ ունեցող պետությունները բանակցություններ սկսեն նոր միջազգային կազմակերպության ստեղծման մասին: 1954թ. ՄԱԿ-ն ընդունեց համապատասխան որոշում Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) ստեղծման մասին: Գործակալությունը պաշտոնապես սկսեց գործել 1957թ. հուլիսի 29-ին, վերջինիս կանոնադրության հաստատումից հետո[5]:

Ըստ այդ կանոնադրության, ԱԷՄԳ-ն իրավունք ունի կազմակերպել միջազգային գիտական համաժողովներ միջուկային էներգետիկայի զարգացման հարցի շուրջ, մասնագետներ ուղարկել տարբեր երկրներ այս բնագավառում հետազոտական աշխատանքների իրականացման հա-

[4] Речь президента Соединенных Штатов г-на Двайта Д. Эйзенхауэра на заседании Генеральной Ассамблеи ООН, 8 декабря 1953 года, http://www.un.org/ru/ga/iaea/eisenhower-2.htm
[5] IAEA-History, https://www.iaea.org/about/overview/history

մար, միջնորդական դերակատարություն ունենալ միջուկային նյութերի և գործիքների փոխանցման կամ փոխանակման հարցում, իրականացնել վերահսկիչ գործառույթներ՝ հսկելու համար, որպեսզի խաղաղ միջուկային էներգիայի զարգացմանը տրամադրված տեխնոլոգիաները չօգտագործվեն ռազմական նպատակներով և այլն:

Գործակալությունն իր գործունեության ընթացքում հատկապես մեծ տեղ է տալիս ատոմային էներգետիկայի անվտանգության խնդիրներին: Այս ուշադրությունը հատկապես ուժեղացավ 1986թ. Չեռնոբիլի աղետից հետո: ԱԷՄԳ կենտրոնական գրասենյակը գտնվում է Վիեննայում (Ավստրիա), այն Տորոնտոյում (Կանադա), Տոկիոյում (Ճապոնիա) նույնպես բացել է տարածաշրջանային անվտանգության երկու գրասենյակ, որոնք զբաղվում են ատոմային էներգիայի անվտանգության խնդիրներով: Բացի այդ, ԱԷՄԳ-ն ունի կապի երկու գրասենյակ, որոնք գտնվում են Նյու Յորքում (ԱՄՆ) և Ժնևում (Շվեյցարիա): Գործակալությանն է պատկանում նաև երեք հատուկ լաբորատորիա, որոնք համապատասխանաբար տեղակայված են Վիեննայում, Սեյբերսդորֆում (Ավստրիա) և Մոնակոյում:

ԱԷՄԳ-ն գործում է որպես միջկառավարական ֆորում՝ ատոմային էներգիայի բնագավառում խաղաղ նպատակներով գիտական և տեխնոլոգիական համագործակցության իրականացման համար: Այս գործակալության ծրագրերի մեջ է մտնում նաև ողջ աշխարհում միջուկային էներգետիկայի տարածմանը նպաստելը: Այլ կերպ ասած՝ այս կառույցն ընդամենը միջոց է միջուկային տեխնոլոգիաների տարածման վերահսկողությունն իրականացնելու համար: Սա մեծ տերություններին հնարավորություն է տալիս մշտապես տեղեկացված լինել բնագավառում կատարվող իրադարձություններին և, ամենակարևորը՝ վերահսկել այս գործընթացը: Այսօր աշխարհում անհնար է միջուկային կայան կառուցել առանց ԱԷՄԳ հավանության, աշխարհի առաջատար բոլոր պետությունները համագործակցում են այս կառույցի հետ ոչ միայն կայանների կառուցման հարցի շուրջ, այլև միջուկային ռեակտորների անվտանգության խնդրում: ԱԷՄԳ-ն մշտադիտարկում է իրականացնում բոլոր կայաններում, նրա ուշադրության կենտրոնում են հատկապես այսպես կոչված խնդրահարույց ռեակտորները: Այդ տիպի կայանների շահագործումը հնարավոր է միայն միջազգային այս կառույցի հավանության դեպքում:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան*

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության (ՆԻՀ) շուրջ ընթացող զարգացումները կարևոր նշանակություն ունեն ՀՀ անվտանգության տեսանկյունից: Հետևաբար, օբյեկտիվորեն առաջանում է հայկական կողմից նախիջևանյան գործընթացներին արդյունավետ արձագանքման, հակազդման կարողությունների և ներուժի, ինչպես նաև առկա խնդիրների գնահատման անհրաժեշտության և վերիմաստավորման խնդիր:

Նախիջևանի ռազմականացումը

ՀՀ անվտանգության տեսանկյունից առավել մտահոգիչ են վերջին ժամանակաշրջանում Նախիջևանի ռազմականացման միտումները, որոնք իրենց ազդեցությունն են թողնում տարածաշրջանում ուժերի հարաբերակցության, հավասարակշռության՝ մինչ այժմ գործող *status-quo*-ի պահպանման գործընթացի վրա: Արդյունքում՝ կարող ենք հաստատել, որ ընթանում է շահերի վերադասավորման, վերադիրքավորման նոր փուլ տարածաշրջանում: ՆԻՀ ռազմականացման գործընթացն անհրաժեշտ է դիտարկել հենց հարավկովկասյան ռազմաքաղաքական զարգացումների և դրանց փոխակերպումների ընդհանուր տրամաբանության ներքո: Մասնավորապես, ՆԻՀ ռազմականացման միտումներն ուղղակի թե անուղղակի կերպով փոխկապակցված են վերջին կես տասնամյակում արցախյան հակամարտության ուղղությամբ սահմանային լարվածության խորացման, միջադեպերի հաճախակիացման միտումներին: Եթե նախկինում Ադրբեջանի ռազմաքաղաքական հիմնական շեշտադրումներն ուղղված էին գերազանցապես արցախյան ուղղությամբ, ապա այսօր աննախադեպ ակտի-

* «Նորավանք« ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

վություն է նկատվում նաև Նախիջևանի շուրջ: ՆԻՀ-ում ռազմատեխնիկայի կուտակման և սպառազինման գործընթացն ավելի ակտիվ փուլ անցավ հատկապես ապրիլյան ռազմական գործողություններից հետո, որի հետևանքով տարածաշրջանը հայտնվեց որակապես նոր ռազմաքաղաքական իրավիճակում: Փորձագիտական հանրության մի հատվածի գնահատականներով՝ ՆԻՀ ռազմականացման ակտիվ գործընթացն ուղղակիորեն պայմանավորված է Հայաստանի կողմից «Իսկանդեր» բալիստիկ հրթիռների ձեռքբերմամբ, ասել է թե՝ հայկական կողմը հրթիռակոծման սպառնալիքի տակ է պահում Բաքուն, ադրբեջանական կողմը՝ Երևանը Նախիջևանից:

Դժվար չէ նկատել, որ ՆԻՀ ռազմականացման գործընթացում առանձնահատուկ դերակատարում ունի Թուրքիան, ինչն արտահայտվում է հարցի ինչպես ռազմատեխնիկական, այնպես էլ ռազմաքաղաքական բաղադրիչի հարթությունում: Ավելին, ՆԻՀ ռազմականացման գործընթացն ուղղորդում է հենց պաշտոնական Անկարան:

2013թ. դեկտեմբերի 20-ին հայտնի դարձավ, որ ՆԻՀ 5-րդ բանակային կորպուսի հիման վրա ստեղծվելու է այսպես կոչված «առանձին համազորային բանակ», որն, ըստ ադրբեջանական պաշտոնական աղբյուրների, ծառայելու է ՆԻՀ պաշտպանական համակարգի արդյունավետության բարձրացման, մեկ ընդհանուր կենտրոնից կառավարման նպատակներին[1]: 2014թ. մայիսի 19-ին կայացավ ՆԻՀ տարածքում տեղակայված «առանձին համազորային բանակի» ստորաբաժանումներին նոր մարտական դրոշի տրամադրման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ՆԻՀ «առանձին համազորային բանակի» հրամանատար Քերեմ Մուսթաֆաևը, ՆԻՀ Գերագույն մեջլիսի քարտուղար Վասիֆ Թալիբովը, Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը: Նշենք, որ միջազգային պրակտիկայում համազորային բանակը զինվորական միավոր է, որն ունակ է ինքնուրույն լուծել մարտական խնդիրներ: Ի դեպ, ՆԻՀ-ում տեղակայված կորպուսը բավական մարտունակ է եղել, ինչը, թերևս, պայմանավորված է կորպուսի՝ թուրքական զինվորական հրամանատարության անմիջական վերահսկողության տակ գտնվելու հանգամանքով:

[1] https://www.panorama.am/am/news/2013/12/21/naxijevan/381572

ՀՀ անվտանգության տեսանկյունից մտահոգիչ է նաև վերջին շրջանում Նախիջևանում նոր ռազմական գնդի ձևավորման փաստը, որի բացման արարողությանն անձամբ ներկա է եղել Ի.Ալիևը: Վերջին տարիներին ՆԻՀ-ում ակտիվորեն ընթացող ռազմական տեխնիկայի և սպառազինությունների կուտակման գործընթացի համատեքստում խոսվում է շուրջ 300-350, իսկ որոշ աղբյուրներով՝ 400 միավոր ռազմական տեխնիկայի մասին, այդ թվում՝ հրթիռային համակարգեր, հրետանի, զրահամեքենաներ: Առավել անհանգստացնող է «Սմերչ» տեսակի համազարկային կրակի ռեակտիվ համակարգերի (ՀԿՌՀ)[2], թուրքական «Ռոկեթսան» ընկերության մի քանի միավոր *T-300 Kasirga*[3], ինչպես նաև *T-122 Sakarya*[4] ՀԿՌՀ-ների մատակարարումը Նախիջևանին[5]: Հաշվի առնելով սահմանի ոչ այնքան մեծ հեռավորությունը Երևանից (ընդամենը 60 կմ)՝ իսկապես, սա լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Այս տեղեկատվությունը ևս մեկ անգամ հերքում է փորձագիտական-զինվորական այն տեսակետը, թե վերջին շրջանում նախիջևանյան ուղղությամբ ադրբեջանական ռազմական տեխնիկայի կուտակումներն ունեն գլխավորապես պաշտպանական առաքելություն՝ Հայաստանի կողմից հնարավոր ռազմական գործողությունների ձեռնարկման չեզոքացման նպատակով: Ավելին, 2017թ. օգոստոսին համացանցում հայտնվեց Նախիջևանում ադրբեջանցիների կողմից ռուսական արտադրության ՍՈՒ-25 ռազմական ինքնաթիռների ուսումնական թռիչքները ցուցադրող տեսանյութ: ՍՈՒ-25 ռազմական ինքնաթիռների ցուցադրական թռիչքները, որոնք նախատեսված են մարտի դաշտում ցամաքային զորքերի աջակցման համար, լուրջ մարտահրավեր պետք է համարել Հայաստանի մայրաքաղաքի անվտանգության

[2] «Սմերչ» տեսակի համազարկային կրակի ռեակտիվ համակարգը նախատեսված է հակառակորդի կենդանի ուժի, տեխնիկայի, կայանած ինքնաթիռների և ուղղաթիռների, հրամանատարական կետերի, կապի հանգույցների և նմանատիպ այլ թիրախների խոցման համար: Համակարգը կարող է արձակել կասետային, բեկորա-ֆուգասային և տերմոբարիկ մարտական մասով օժտված ռեակտիվ արկեր:

[3] https://bmpd.livejournal.com/2138101.html

[4] Թուրքական «Ռոկեթսան» ընկերությունը *Sakarya* տեսակի ՀԿՌՀ-ների զանգվածային արտադրությունը սկսել է 1997թ.:

[5] *Kasirga* տեսակի ՀԿՌՀ-ն նախատեսված է հակառակորդի պաշտպանության խորքում տեղակայված ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների՝ ռազմաբազաների, զորքերի կենտրոնացված դիրքերի, օդանավակայանների, հրթիռային համակարգերի կայանների, տրանսպորտային հանգույցների ուղղությամբ հարվածներ հասցնելու համար:

ապահովման տեսանկյունից: Կարևոր հարցերից մեկն էլ վերաբերում է հնարավոր ռազմական սպառնալիքի պարագայում Մեծամորի ԱԷԿ-ի անվտանգության ապահովման արդյունավետության և մեր համարժեք գործողությունների խնդրին:

Ռազմական տեխնիկայի և սպառազինությունների կուտակումներին զուգահեռ, վերջին տարիներին ՆԻՀ-ում կանոնավոր բնույթ են ստացել զորավարժությունները, որոնք անցկացվում են նաև Թուրքիայի հետ համատեղ: 2014թ. ապրիլի կեսերին ՆԻՀ-ում Ադրբեջանի իշխանություններն անցկացրին լայնամասշտաբ զորավարժություններ, որոնց մասնակցում էին ավիացիան, ՀՕՊ համակարգերը, հրթիռային, հրետանային զորքերը և այլ զորատեսակներ: Զորավարժությունների ընթացքում ստուգվելու էր Նախիջևանում տեղակայված զորամասերի պատրաստվածությունը: 2016թ. հոկտեմբերի 3-ին Նախիջևանում մեկնարկեցին հրամանատարաշտաբային զորավարժությունները: Ադրբեջանի ՊՆ հաղորդմամբ՝ զորավարժությունների ընթացքում զորամասերը և ստորաբաժանումներն իրականացնելու էին ՆԻՀ տարածքը պաշտպանելու խնդիրներ, փորձարկվելու էին հակառակորդի հարձակումը և սպառնալիքները կանխարգելելու միջոցառումներ, հրթիռահրետանային համակարգերի, օդուժի և սպառազինության այլ միջոցներով ստորաբաժանումներն իրականացնելու էին պայմանական հակառակորդի պաշտպանության խորքում տեղակայված ռազմավարական օբյեկտների ոչնչացման խնդիրներ: Իսկ 2016թ. նոյեմբերին Ադրբեջանում անցկացված լայնամասշտաբ զորավարժություններին տագնապի ազդանշանով ներգրավված էին նաև ՆԻՀ առանձին համազորային բանակի ստորաբաժանումները: Զորավարժություններն անցկացվում էին օպերատիվ նշանակության շրջանակներում՝ առանձին համազորային բանակի զորամասերի և հրետանային ստորաբաժանումների պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացման նպատակով: 2017թ. հունիսին ՆԻՀ-ում մեկնարկեցին թուրք-ադրբեջանական համատեղ մարտավարական զորավարժություններ, որոնց նպատակն էր փորձի փոխանակման միջոցով զարգացնել զորքերի համակարգման գործընթացը, գնահատել համատեղ

գործողությունների ներուժը: 2017թ. նոյեմբերի երկրորդ կեսին Արցախին և Նախիջևանին կից շրջաններում անցկացվեցին հերթական ադրբեջանական զորավարժությունները: Նախիջևանի ուղղությամբ զորավարժությունների ընթացքում ցուցադրվեցին Տ–72 տանկեր, «Գրադ» և «Սմերչ» հրթիռային համալիրներ, հրետանի, Դ–30 թնդանոթներ, թռիչքներ իրականացրին Սու-25 ռազմական ինքնաթիռները, Մի 24/35 ուղղաթիռները:

Հակազդման քայլեր

Նախիջևանի ռազմականացման միտումները մտահոգիչ են ոչ միայն ՀՀ պաշտպանական անվտանգության, այլև, առհասարակ, հարավկովկասյան տարածաշրջանում կայունության պահպանման տեսանկյունից: Խնդրի լրջությունը շեշտվեց վերջին կես տասնամյակում արցախյան ուղղությամբ սահմանային լարվածության դինամիկայի և ապրիլյան ռազմական գործողությունների ֆոնին: Միևնույն ժամանակ, հայկական կողմն իր հերթին վերջին շրջանում զգալի աշխատանքներ է իրականացնում ՆԻՀ-ից եկող ռազմական, ռազմաքաղաքական վտանգներն ու մարտահրավերները զսպելու և հակազդելու ուղղությամբ: Առանձնակի կարևորություն պետք է տալ ՆԻՀ-ի հետ սահմանում հայկական զինուժի կողմից, առանց հրադադարի ռեժիմի խախտման, նոր դիրքեր հսկողության տակ վերցնելու հանգամանքին (շուրջ 100 քառ. կմ): Փորձագիտական գնահատականներով՝ Նախիջևանի ուղղությամբ նոր դիրքեր վերցնելու իրողությունն արձագանքն էր 2014թ. հունիսի սկզբին Նախիջևանի սահմանային լարվածության մեծացմանը, որի հետևանքով հայկական կողմն ունեցավ երկու զոհ: Հարցի առնչությամբ ՀՀ ՊՆ-ն գրեթե բաց տեքստով ակնարկեց, որ Նախիջևանում ազատ գործում են թուրքական վարձկաններ, այսինքն՝ Թուրքիայի միջամտությամբ փորձ է արվում Նախիջևանի հատվածում հայ-ադրբեջանական սահմանային իրադրությունը, որը մինչ այժմ համարվել է հայ-ադրբեջանական սահմանի ամենահանգիստ հատվածը, դուրս բերել համեմատական հանգիստ վիճակից: Հաշվի առնելով ՆԻՀ-ում Թուրքիայի ռազմաքաղաքական ներկայությունը, առանձին համազորային բանակի՝ Թուրքիայի ԶՈՒ-ի առանձնահատուկ ուշադրության ներքո գտնվելու իրողությունը (առկա են թուրք

սպայական բարձրաստիճան կազմ, զինվորական խորհրդատուներ)՝ հայկական կողմի վերահսկողության սահմանումը նշյալ դիրքերի նկատմամբ մարտավարական-դիրքային, ինչպես նաև ռազմավարական լուրջ ձեռքբերում պետք է համարել:

Ընդգծենք, որ Նախիջևանի ռազմականացումն ընթանում է ոչ թե սոսկ Ադրբեջանի նախաձեռնությամբ և թուրքական կողմի ուղղակի աջակցությամբ, այլ թուրք-ադրբեջանական տանդեմի շրջանակներում: Մյուս կողմից՝ այս զարգացումները լուրջ մտահոգության տեղիք են տալիս նաև ՌԴ-ի համար, քանի որ Թուրքիայի ռազմաքաղաքական «ներկայության» ընդլայնումը Նախիջևանում ռազմավարական նշանակության մարտահրավեր է Ռուսաստանին՝ սպառնալով թուլացնել վերջինիս ազդեցությունը Հարավային Կովկասում: Այս տեսանկյունից, ՆԻՀ համատեքստում, թուրք-ադրբեջանական տանդեմին ի հակադրություն, գրեթե հիմնականում համընկնում են ՀՀ և ՌԴ ռազմաքաղաքական շահերը, ինչը փաստում են վերջին շրջանում հայ-ռուսական համատեղ հակազդման նախաձեռնությունները:

2016թ. նոյեմբերի 30-ին ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարներ Վ.Սարգսյանը և Ս.Շոյգուն Մոսկվայում հայ-ռուսական միացյալ զորամիավորման մասին պայմանագիր ստորագրեցին: Միացյալ զորախմբում ընդգրկվելու են Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռազմաբազան և հայաստանյան ռազմական ստորաբաժանումներ, մասնավորապես՝ հայկական զինված ուժերի 5-րդ բանակային կորպուսը: Հայ-ռուսական միացյալ զորամիավորումը գործում է 2000 թվականից, և նոր պայմանագիրը միայն ամրապնդում է այդ զորամիավորման իրավական հիմքը: Հայ-ռուսական միացյալ զորամիավորումը խաղաղ ժամանակ լինելու է հայկական կողմի հրամանատարության ներքո, իսկ պատերազմական իրավիճակում ՀՀ և ՌԴ գերագույն հրամանատարները միասին են որոշելու զորամիավորման հրամանատարության և կառավարման հարցերը: Հայկական կողմը չի թաքցնում, որ անհրաժեշտության դեպքում հայկական զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով զորամիավորումը կարող է պատասխանել նաև թուրքական կողմից եկող վտանգներին: Զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանի խոսքերով,

միացյալ խմբավորման մեծ խնդիրներից մեկն է այն, որ հատկապես հայ-թուրքական ուղղությունից սպառնացող վտանգի դեպքում հայ-ռուսական համատեղ միացյալ զորախմբի ուժերով իրականացվեն պաշտպանության մարտական խնդիրներն այդ ուղղությամբ[6]:

Կարևոր է նաև ՀՀ-ի և ՌԴ-ի միջև «Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» (ՀԱԿՏ ՀՕՊ համակարգ) համաձայնագրի իրավաքաղաքական հենքի ձևավորումը (համաձայնագիրը ստորագրվել է 2015թ. դեկտեմբերի 23-ին)։ Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ «հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված համակարգի զորքերի և հակաօդային պաշտպանության այլ տարածաշրջանային համակարգերի կազմի մեջ մտնող զորքերի համատեղ գործողությունների համակարգումն իրականացնում է ՌԴ ԶՈ օդատիեզերական ուժերի գլխավոր հրամանատարը։ Ընդհանուր ղեկավարումը կովկասյան տարածաշրջանում իրականացնում է ՌԴ Հարավային ռազմական շրջանի զորքերի հրամանատարը։ Հավաքական անվտանգության առանձին շրջանի (ՀՀ սահմաններում) հակաօդային պաշտպանության միավորված համակարգի զորքերի համատեղ գործողությունների կառավարումն իրականացնում է Հայաստանի ԶՈ հակաօդային պաշտպանության զորքերի պետը[7]։ Սույն համաձայնագրով հայկական կողմն իր ՀՕՊ համակարգն ամբողջությամբ չի տրամադրում միավորված տարածաշրջանային համակարգին։ Համաձայնագիրը հնարավորություն է տալիս օգտագործել ՌԴ ԶՈ օդատիեզերական զորքերի ներուժը՝ ընդհուպ մինչև միջուկային զենքի կիրառում։ Համաձայնագրի օգնությամբ հայկական կողմը կստանա Հայաստանում գտնվող ՀՕՊ ռուսական ռեսուրսները, այդ թվում՝ կործանիչ ավիացիան։

Առանձնակի կարևորություն պետք է տալ վերջին երկու տարիներին Գյումրու ռուսական 102-րդ ռազմաբազայի ռազմատեխնիկական հագեցվածության ընդլայնման գործոնին։ Խոսքը հատկապես *«Небо-М»*

[6] https://www.azatutyun.am/a/28471565.html

[7] http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1258.pdf

տեսակի ռադիոտեղորոշիչ համալիրների տեղակայման մասին է: Փորձագիտական շրջանակներում ռադիոտեղորոշիչ այս համալիրներով ռուսական ռազմաբազայի համալրումը պատասխան համարվեց Ադրբեջանի կողմից իսրայելական արտադրության *Green Pine* կայանի ձեռքբերմանը: *«Небо-М»* ռադիոտեղորոշիչ համալիրները նախատեսվում են Թուրքիայի (նաև Նախիջևանի), Իրաքի, Սիրիայի և Վրաստանի օդային տարածքների զգալի հատվածի վերահսկման համար: *«Небо-М»*-ն ընդգրկում է հրթիռային հարձակման մասին նախազգուշացման համակարգեր և ռադիոտեղորոշիչ կայաններ, զենիթահրթիռային ստորաբաժանումների համար թիրախավորման ռադարներ: *«Небо-М»*-ը կարող է հատվածային 200-250 կմ և շրջանակային ռեժիմներով 160 կմ հեռավորության վրա հայտնաբերել ՀԿՌՀ-ներ:

Հետևություններ

- ՆԻՀ ռազմականացման գործընթացն իրականացվում է Թուրքիայի անմիջական վերահսկողության ներքո,
- ՆԻՀ ռազմականացումը սոսկ հայ-ադրբեջանական դիմակայություն չէ, այլ ունի շատ ավելի լայն՝ տարածաշրջանային նշանակություն՝ Թուրքիայի և ՌԴ ուղղակի մասնակցությամբ,
- Թեև ՆԻՀ ռազմականացման թուրք-ադրբեջանական «նախագիծը» հիմնականում հավասարակշռվում է հայ-ռուսական հակազդմամբ, այնուհանդերձ, այն շարունակում է կրել լրջագույն մարտահրավերներ և ռիսկեր:

ԻՆՏԵՐՆԵՏ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Արա Մարջանյան[*]

Սույն հոդվածը մեր նախորդ հրապարակումների [1-4] շարունակությունն է՝ նվիրված Հայաստանում ինֆորմացիոն և կապի տեխնոլոգիաների (ԻԿՏ, *ICT*) ոլորտի ցուցանիշների ներկայացմանը և վերլուծությանը, համահունչ «Նորավանք» ԳԿՀ «Հայաստան-Ադրբեջան. կրիտիկական ենթակառուցվածքներ» թեմայի մոտեցումներին: Ստորև դիտարկվում են Հայաստանում և տարածաշրջանում «ինտերնետի օգտատերեր» (ի.օ.) ցուցանիշները:

1. ԻԿՏ զարգացումը և «թվային խզումը»

Մինչ բուն նյութին անցնելը, կանգ առնենք, այսպես կոչված, «թվային խզման» (*digital devide*) երևույթի վրա: Այս եզրույթը, որն այնքան տարածված էր մի քանի տարի առաջ, շրջանառության մեջ դրվեց XX դարի 90-ականների վերջին, ԽՍՀՄ փլուզումից հետո և ԻԿՏ ոլորտի զարգացմանը համընթաց: *Գծապատկեր 1*-ում ներկայացված են 1990-2008թթ. տպված անգլերեն և ռուսերեն գրքերում «*digital devide*» և «*цифровой разрыв*» բառակապակցությունների օգտագործման հաճախության գրաֆիկներն ըստ *Google N-grams* անգլերեն և ռուսերեն կորպուսների[1]:

Այն կոչված էր արտահայտելու զարգացած և զարգացող տարածաշրջանների երկրների միջև «թվային անհավասարության» փաստը: Խոսքն այն մասին է, որ այս տարածաշրջանների երկրների միջև ընդհանուր տնտեսական անհավասարության մեջ ի հայտ է եկել նոր չափողականություն՝ պայմանավորված ԻԿՏ զարգացմամբ: Առաջարկվեցին տարատեսակ տեխնոլոգիական ցուցանիշներ, որոնք կոչված են լրացնելու տեսա-

[*] «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրենի տեղակալ, տ.գ.թ.:

[1] *Google N-grams* գործիքի և *Google* անգլերեն ու ռուսերեն կորպուսների մասին տե՛ս [5]:

կարար ՀՆԱ ցուցանիշի հիման վրա ստացվող պատկերը: Սկզբնական փուլում դրանք զուտ քանակական էին՝ բնակչության մեկ շնչին ընկնող համակարգիչներ, ֆիքսված գծով կապի բաժանորդների թիվ և այլն: Սակայն բավական արագ պարզ դարձավ, որ զուտ քանակական այս ցուցանիշները բավարար չեն իրական պատկերը նկարագրելու համար:

Իրոք, եթե 2001-ին զարգացած և զարգացող երկրների միջև ֆիքսված լայնաշերտ կապի (ՖԼԿ) բաժանորդների թվի հարաբերությունը կազմում էր 7:1՝ հօգուտ զարգացած երկրների, ապա 2010-ին այն արդեն 3.5:1 էր: Եվ սա տեղի ունեցավ հիմնականում զարգացող երկրներում ՖԼԿ բաժանորդների թվի էական աճի հետևանքով, մինչդեռ զարգացած երկրներում աճը դանդաղ էր («հագեցման էֆեկտ»): Այսինքն՝ իրականում տեղի էր ունեցել «թվային խզման» նվազում, թեև «թվային անհավասարությունը» պահպանվել էր: Այսպիսով, բաժանորդների թվի առումով, այսինքն՝ երևույթի այսպես ասած «0-ական մակարդակում», այլևս տեղին չէ խոսել «թվային խզման» մասին: Բայց պատկերը միանգամայն այլ է, եթե դիտարկումը հիմնենք այս ցուցանիշի ոչ թե քանակական (թիվ), այլ *որակական* որևէ ասպեկտի վրա, օրինակ՝ ՖԼԿ տեղակայված տեսակարար հզորության (ՏՏՀ, կբ.վ/մարդ) դիտարկման վրա:

Եվ դա հենց այն էր, ինչն արվեց Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ, *ITU*) 2012թ. տարեկան հաշվետվությունում [6]: Համաձայն այդ ուսումնասիրության, 2000-2010թթ. ընթացքում զարգացած և զարգացող երկրների միջև ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշով տարբերությունը ոչ թե նվազել էր կամ պահպանվել, այլ աճել էր: Այն էլ՝ 117 անգամ: Նույնն էր պատկերը նաև մոբիլ կապի (ՄԿ) ՏՏՀ դեպքում, աճը՝ մոտ 22 անգամ ([6], Ch.5): 2012թ. այս կարևոր ուսումնասիրությունից հետո, խոսելով «թվային խզման» մասին, առաջին հերթին նկատի են ունենում զարգացած և զարգացող երկրների միջև խզումն ըստ ՖԼԿ ՏՏՀ-ի: Այսպիսի դիտարկում Հայաստանի և տարածաշրջանի համար կատարել էինք [2]-ում:

Գծապատկեր 1

«Digital devide» (վերևում) և «цифровой разрыв» (ներքևում) բառակապակցությունների (2-grams) հաճախությունները անգլերեն և ռուսերեն գրքերում՝ ըստ Google N-gram Viewer գործիքի



2. Ինտերնետ օգտատերեր

ԻԿՏ ոլորտում խզման «առաջին ածանցյալի» երևույթին են պատկանում նաև «ինտերնետ օգտատերեր» (ի.օ.)[2] պարամետրի վրա հիմնված դիտարկումները: Առաջին հայացքից լինելով զուտ քանակական՝ ի.օ. ցուցիչն իրականում որակական է և ինտեգրալ, քանի որ ցանցային տեխնոլոգիաների հասունության մակարդակի հետ մեկտեղ ներառում է թե՛ տվյալ երկրում ինտերնետի հասանելիության (*availability*) ու հանրային վարկի սոցիալ-քաղաքական բաղադրիչները, թե՛ դրա մատչելիության (*afordability*) տնտեսական ասպեկտը: Այս ցուցանիշը ֆիքսվում է ՀՄՄ տվյալների գրադարաններում և երկրների ու տարածաշրջանների համեմատական վերլուծությունների համար ունի կենտրոնական դերակատարում[3]:

[2] Որպես % տվյալ երկրի բնակչությունից:
[3] ՖԼԿ ՏՏՀ ցուցանիշի հետ մեկտեղ, տե՛ս [2]:

Գծապատկեր 2

Ինտերնետ օգտատերեր, բնակչության %: ՀՄՄ, 2017



Աղբյուրը՝ "ITU Individuals_Internet_2000-2016.xls"

Գծապատկեր 2-ում ներկայացվում են մեր տարածաշրջանի 6 երկրների, ինչպես նաև Էստոնիայի և Իսրայելի ի.օ. ցուցիչների ժամանակային շարքերը 2000-16թթ. համար: Ինչպես տեսնում ենք, Էստոնիան ի.օ. 50% արժեքը գրանցել էր 2003-ի ավարտին, Իսրայելը՝ 2007-ին, ՌԴ-ն և Ադրբեջանը՝ 2011-ին, իսկ Հայաստանը՝ միայն 2014-ին: 2016-ին Հայաստանն իր «ի.օ.» ցուցիչով (64.2%)[4] զիջում էր Ադրբեջանին (78.2%) և ՌԴ-ին (76.4%), բայց առաջ էր Իրանից (53.2%), Թուրքիայից (58.4%) և Վրաստանից (50.0%): Ադրբեջանի 2016թ. ցուցանիշը գրեթե հավասար է միջին եվրոպական ցուցանիշին՝ 79.1%[5]: Համեմատության համար նշենք, որ ըստ ՀՄՄ-ի՝ 2016-ին ի.օ. միջին արժեքն աշխարհի համար կազմել էր 47.1%,

[4] Ըստ ՀՄՄ 2018թ. փետրվարին ճշգրտված տվյալների: ՀՄՄ համացանցային գրադարանում Հայաստանի 2016թ. «ի.օ.» ցուցանիշի համար շարունակում է բերվել 2016-17թթ. 62% գնահատականը, որը կրկնում ենք *Գծապատկեր 2*-ում: Հայաստանի ԻԿՏ ցուցանիշների բարելավման մասին տե՛ս [7]:

[5] ԻԿՏ ոլորտում Ադրբեջանի ցուցանիշների պետական զեղծարարությունների մասին տե՛ս [1, 2]:

զարգացած և զարգացող երկրների համար՝ 81.0% և 40.1% համապատասխանաբար: Այսպիսով, ի.օ. ցուցիչով առաջատարներից Հայաստանի ուշացումը (*լագը*) կազմում է մոտ 10 տարի: Հիշեցնենք, որ Հայաստանում ՖԼԿ ներթափանցման ուշացումն առաջատար երկրներից նույնպես կազմում էր 10-12 տարի (տե՛ս [1], *Գծապատկեր 3*):

Ուշագրավ է, որ անդրկովկասյան երեք հանրապետությունների ի.օ. ցուցանիշները սկսում են էականորեն աճել վրաց-օսական քառօրյա պատերազմի թվականից՝ 2008-ից: Վարք, որը բնորոշ է ԻԿՏ նաև այլ ցուցանիշներին [1, 2]: Հայաստանի «ի.օ.» կորին բնորոշ է ավելի զուսպ կտրուկությունը (*slope*), քան Ադրբեջանի կորին: Այն ավելի նմանվում է Վրաստանի աճի տեմպերին, սակայն կտրուկ առաջ է անցնում վերջինից 2014-ից (տե՛ս *Գծապատկեր 2*):

Ցավալին այն է, որ համացանցի զարգացման առումով 2000-ականներին Հայաստանի շոշափելի առավելությունն իր բոլոր հարևանների հանդեպ՝ փաստված ՀՄՄ հրապարակումներում և ՀՄՄ տվյալների գրադարանում, գրեթե զրոյացվեց հետագայում:

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարջանյան, Ա.Հ.,* Ֆիքսված լայնաշերտ կապը Հայատանում և տարածաշրջանում. փաստեր, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 7 (86), 2017:
2. *Մարջանյան, Ա.Հ.,* Ֆիքսված լայնաշերտ կապի հզորությունը և արագությունը Հայատանում և տարածաշրջանում. փաստեր: «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 8 (87), 2017:
3. *Մարջանյան, Ա.Հ.,* Ադրբեջանի տիեզերական տեխնոլոգիական սեգմենտը, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 1 (90), 2018:
4. *Մարջանյան, Ա.Հ.,* Ադրբեջանի կոսմիկական ծրագրի հետախուզական բաղադրիչը, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 2 (91), 2018:
5. *Մարջանյան, Ա.Հ.,* Բառերի տիեզերք. հաճախակիության բառարանները և *Google N-grams* գործիքը, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես, թիվ 4 (74), 2017, էջ 60-81:
6. International Telecommunication Union. ICT Facts and Figures 2012. UN ITU, Geneva, 2012.
7. «Կառավարությունը նախատեսում է կոնկրետ գործողություններ իրականացնել միջազգային թվային վարկանիշներում հայաստանյան ցուցանիշի բարելավման և առաջընթացի ապահովման համար», ՀՀ կառավարություն, հինգշաբթի, 15-ը փետրվարի, 2018թ., http://www.gov.am/am/news/item/13451/:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 4 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 19.04.2018թ.
Թիվ 3 (92), 2018թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում